Ներկարարի գործարանում Փանոսը նոյն յաջողութիւնը ունեցաւ, որպէս իր վարժապետի փոքրիկ դպրոցում: Իր ընդարձակ ընդունակութիւններին համար այստեղ աւելի լայն ասպարէզ գտաւ, եւ մի քանի տարուց յետոյ աշակերտից դարձաւ փոխ-վարպետ եւ մի նոր փայլ տոեց իր վարպետի գործարանին: Այդ տեսնելով, վարպետը շատ անգամ առաջարկում էր նրան ընկերանալ իր հետ, բայց Փանոսը միշտ շնորհակալութեամբ մերժում էր: Երբ նա փոքր ի շատէ գումար ձեռք ձգեց, հիմնեց իր համար մի փոքրիկ գործարան, որը հետզհետէ ընդարձակելով, այն կատարելագործութեանը հասցրեց, որպէս մենք տեսանք:

Միեւնոյն տարում, երբ Փանոսը թողեց դպրոցը, նրա վարժապետի հետ պատահեց մի դժբախտութիւն: Նա սովորութիւն ունէր ամառը աշակերտներին տանել ծովեզրը լողանալու: Այդ միջոցին աշակերտներից մէկը խեղդոեցաւ: Նրա ծնողները թէեւ բոլորովին ներողամտութեամբ վերաբերոեցան դէպի անզգոյշ վարժապետը, բայց կորուստը այնքան ծանր էր վարդապետի զգայուն սրտի համար, որ նա ոչնչով չէր կարողանում մխիթարել իրան: Իր ցաւերը մոռացութեան տալու համար ն մտածեց ընտրել մի նոր եւ ամենադժոարին պարապմունք, որի մէջ կեանքը ենթակայ լինէր անընդհատ վտանգների, եւ որը աւելի բախտաւորութիւն կը պատճառէր նրան, եթէ կը վերջանար մահոամբ: Այդ նպատակով նա ցրեց իր աշակերտներին եւ անյայտացաւ: Նրա մասին շատ բանէր էին պատմում. ասում էին, որ քուրդ վայրենիների մէջ հայոց տառեր եւ քրիստոնէութիւն է տարածում, հրաշքներ է գործում, լուսաւորչական եկեղեցի է հիմնում եւ բաւական հետեւողներ ունի: Բայց թէ որտե՞ղ էր այդ նոր առաքեալը եւ ո՞ր երկրում, ոչ ոք չգիտէր, միայն խօսւում էր, թէ դեռ կենդանի է:

Գ. ԱՍԼԱՆԸ ՈՐՊԷՍ ԲԺԻՇԿ

Եւրոպական բժշկի յայտնոելը շուտով տարածոեցաւ ամբողջ քաղաքում եւ մինչեւ նահանգապետ-փաշայի ականջը հասաւ: Փաշան ցանկացել էր տեսնել բժշկին: Բացի նրանից, ամէն նշանաւոր եւ աննշան անձինքներից հրաւիրւում էր նա, իսկ շատերը նրա մօտ էին գալիս: Ասլանը հանգստութիւն չունէր. ես նրան խիստ հազիւ անգամ էի տեսնում. պատահում էր, որ ամբողջ օրով տուն չէր վերադառնում: Վերադառնում էր գիշերը միայն, այն ժամանակ եւս, վարպետ Փանոսի հետ առանձնացած, երկար ու երկար խօսում էին: Այդ խորհրդակցութիւնները խլում էին նրանից գիշերային հանգստի մեծ մասը: Երբեմն նկատում էի՝ նրա մօտ գալիս էին անծանօթ անձինք,